

սխալ կը թուի: Հաւանաբար ԱՄԻՍՍ ՏԱՄՆ ԵՒ ԵՐԿՈՒ սրբադրելու է, որովհետեւ պատմիչը անմիջապէս կը կցէ. Յետ այնուհետեւ գալանդան Աբլասադայ կալեալ մերձաւորացն՝ չարաչար կործանեցին: Այսպէս ուրեմն Աբլ-Ասադի սպանողները, Գաւոն եւ Շապուհ, կը բռնուին Աբլ-Ասադի մերձաւորներէն եւ իրենց կարգին կը սպաննուին: Սակայն ապստամբութիւնը Բարակի զէմ՝ կը շարունակուի: Կազանկատուացի կը վկայէ որ եւ ի նոյն ամի (830) էանց Բարան զգետովն Երասխ ի Պարսից, եւ յԱմարաս գաւառ բնակեցաւ: Բարակ որ յազթեց Աբրահիմի բանակին, Ամարաս եկաւ՝ անցնելով Երասխը: Ամարաս՝ Արցախի վարանդայ գաւառին մէջ շէն մըն էր այն տունն: Մուղանի դաշտին մէջ գտնուող այս վայրը ընտիր տեղ մըն էր Բարակի բանակին համար՝ ձմեռելու: Բարակ զգալով որ Պաղտատի Խալիֆաները պիտի շարունակեն իրենց կռիւր իր զէմ՝ մինչեւ որ մէկնումէկը վերջնակաւնապէս պարտուի, կ'երեւի թէ չուզեց Սիւնեաց ապստամբութիւնը աւելի արծարծել, եւ ցանկացաւ իր թիկունքը սպառնալով՝ հայ իշխաններուն հետ համաձայնութեան դալով: Ուստի ըստ պատմիչին, բան խաղաղութեան սկսաւ խօսել, զի ի հնազանդութիւն մում եկեցեցին (ապստամբ հայ իշխանները: Յ. Բ.), եւ ժամագիտ զոյմամբ ումնի հնազանդեցան: Բարակ նոյնիսկ իր խաղաղասիրական ձեռնարկին մէջ կը յաջողի: Սիւնեցի իշխաններէն ումանք առժամեայ տեղի կու տան, սակայն յետոյ դաւեալք անհնազանդ եղին, եւ շարունակեցին իրենց ապստամբութիւնը:

Պատմիչը կը շարունակէ ըսելով որ անտի (Ամարասէն) դարձեալ Բարանայ յերկիր իւր ի Պարաս յԱտրպատական: Պատմիչին վկայութենէն այնպէս պէտք է հետեւցնել որ Բարակ Մուղանի (Ամարասի) մէջ ձմեռելէ վերջ՝ դարնան կ'անցնի Պարսից Ատրպատական: Պէտք է խորհիլ որ ան Սիւնեցի հայ իշխաններուն տմանց ժամանակաւոր տեղի տալէն քաջալիւր-

ուած՝ կը յուսար որ միւսներն ալ տեղի կու տան եւ Սիւնիք դարձեալ կը խաղաղի: Խաղաղասիրական իր այս գործը շարունակելու համար Բարակ իր տեղը երող գորավար ումն Ռաստամ հանդերձ գորոք, եւ ետ մում հրաման ոչ պատերազմի ընդ բերդին (այսինքն Գորոզու, ուր կեդրոնացած էին ապստամբները), այլ ի սէր համակել, զի հնազանդեացին: Ասիկա այլեւս ոչ մէկ կասկած կը թողու որ իմ հետեւութիւնս, որ քիչ վերը ըրի, ճիշտ էր:

Ռաստամ, հաւանաբար Բարակի ազանգաւորներէն Պարսիկ հրամանատար մը, չի հետեւիր Բարակի յանձնարարութեան: Պատմիչը կը շարունակէ. Իսկ Ռաստամայ անփոյթ արարեալ գաւառուէրն Բարանայ՝ ել տալ պատերազմ ընդ ամրացելոցն ի բերդին: Յայնժամ ապախնեալ բերդացեացն ի գորուքիւնն Քրիստոսի՝ զխաչս եւ զարբոց նշխարս ընդդէմ բերեալ՝ ի հարուածս սաստիկս հարկանէին զպարսկական գունդըն, եւ գերծեալ յայնմանէ գՔրիստոս փառաւորէին գոհանալով զմումնէ:

Կազանկատուացիի վկայութեան այս մասը նախ եւ առջ կը հաստատէ որ Գաւոն եւ Շապուհ, որ ապստամբութիւնը սկսան՝ հայեր ըլլալու էին, որոնց սկսած ապստամբութիւնը շարունակող այս գործակիցներն էին որ գորութեամբ Քրիստոսի, խաչով եւ նշխարով պարսկական գունդը կը հարուածէին, այսինքն Բարակի իր տեղ թողուցած Ռաստամ պարսիկին բանակը կը հարուածէին, պարտութեան կը մատնէին:

Բարակի յանձնարարութեան զէմ Ռաստամի ըրած այս սխալ քայլը պատճառ եղած է անչուշտ որ Բարակի հրաւերին անսացող Սիւնեցի հայ իշխանները դարձեալ միանան ապստամբական շարժումին: Սիւնեաց այս ապստամբութիւնը ուրեմն յաջողութիւն կը գտնէ 831ին, որքան որ կրնանք հաշուել մեր պատմիչին տուած ժամանակագրութենէն:

Բարակ ասկէ վերջ կ'երեւի թէ ձեռքը կը քաշէ Սիւնիքէն: Ան հետզհետէ կեանքի